

F



Saints Joachim & Anne Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor
Rev. Fr. DIRAN PAPIAZIAN, Archpriest
Տ. ՏԻՐԱՆ ԱՌ. ԲԶՆՅ. ՓԱՓԱՋԵԱՆ, ՀՈՎԻԼ

18 Սեպտեմբեր, 1991

Գեր. Տ. Խաժակ Եպս. Պարսամեան, Առաջնորդ
Առաջնորդարան Հայոց,
Ի Նիւ Եորք, Ն.Ե.,

Սիրելի Սրբազան,
Նկատի ունենալով ժամանակի արագասան թաւալումը, սոյն նամակը կը գրուի պարզապէս առ ի յիշեցում՝ կարգ մը յարակից պարագաներով, Սրբոց Յովակիմ եւ Աննա եկեղեցւոյս ձեր տալիք առաջին պաշտօնական այցելութեան, եկեղեցւոյս Ս. Օծման 8-րդ Տարեդարձին առթիւ որ հանդերձեալ է կատարուիլ Կիրակի նոյեմբեր 17-ին, 1991:

Որքան որ տեղեակ եմ դուք պիտի ժամանէք Շաբաթ օրը: Անշուշտ յետագային, երբ օրը մօտենայ մենք վստահաբար պիտի ունենանք ձեր ճշգրիտ ժամանակացոյցը՝ Առաջնորդարանէն դրկուած:

Կանխապէս կուզենք յիշեցնել որ լաւագոյնն է ՄիՏՎԷՅԻ օղակայանը գործածել, գործնական դիւրութիւնները նկատի առած: Վերոյիշեալ օղակայանը կէս ժամուայ հեռաւորութիւն մը միայն ունի եկեղեցիէս:

Ինչպէս ծանօթ պիտի ըլլայ ձեզի, Շաբաթ օրը ձեր ժամանակը առնուած է, կարծեմ Թէքէեան Մշակութային Միութեան նախաձեռնութեամբ տեղի ունենալիք ճաշկերոյթի մը եւ երեկոյթի մը՝ ձեր ներկայութիւնը խնդրուած ըլլալով, որ տեղի պիտի ունենայ Բարեգործականի շէնքին մէջ, Ի Շիքակօ: Ուստի յիշեալ Միութեան Կազմակերպիչ Յանձնախումբին անկ է ստանձնել պատշաճօրէն ձեր երթեւեկը, նախ պանդոկէն դէպի Բարեգործականի շէնքը եւ ապա Բարեգործականէն դէպի պանդոկ, այսինքն Շիքակօյի հարաւամասէն Հիւսիսամաս եւ Հիւսիսամասէն հարաւամաս: որ մօտաւորապէս մէկ ժամուայ հեռաւորութիւն կը ներկայացնէ:

Իսկ Կիրակի օրը, ինչպէս յայտնի է, հանդերձեալ էք պատարագել եւ քարոզել եկեղեցւոյս մէջ, եւ ապա եկեղեցական արարողութիւններէն ամիջապէս վերջ, եկեղեցւոյ Յովհանէսեան սրահին մէջ տեղի ունենալիք ճաշկերոյթին նախազանգել եւ օրուան գլխաւոր բանախօսը ըլլալ: Այս առիթով պիտի խնդրէինք ձեզմէ որ արարողութեան ընթացքին յարմար պահու մը, ուրարի տուչութիւն ընէիք Տիար ծան Յովսէփեանի, նախկին Ետուսադէմացի մը, որ տարւոյս ընթացքին միացաւ մեզի եւ հաւատարմօրէն կը մասնակցի եկեղեցւոյս կիրակնօրեայ երգեցողութեան, իբրեւ Ս. Սեղանի սպասարկու եւ կամ իբրեւ գործօն Սարկաւազ: Մենք ունինք գոյգ մը ուրարակիրներ որոնց զիտցածը ծանին զիտցածէն աւելի չէ:

Կանխայայտ շնորհակալութիւններ եւ ցտեսութիւն....:

Խոնարհ Աղօթակից,
Ս. Տիրան Ա. Բ. Բ. Փափագեան
Ս. Տիրան Ա. Բ. Բ. Փափագեան